«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝«Զեյթունը 19–րդ դարի 60–ական թվականներին» թեմայի դասվանդումը 11–րդդասարանում

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Գ.Հարությունյան

ՄԱՐԶ՝ Լոռու մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Թեղուտի միջնակարգ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.Էմինյան

2022

Բովանդակություն

Ներածություն.....3

Գլուխ1. Ընդհանուր տեղեկություններ Զեյթունի 1862-1896 թվականների ապստամբության վերաբերյալ.....6

Գլուխ 2. Զեյթունի ապստամբության դասավանդման առանձնահատկությունները 11-րդ դասարանում.....12

Եզրակացություններ.....19

Օգտագործված գրականության ցանկ 20

Ներածություն

<u>Թեմայի արդիականությունը:</u> Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություն-ներում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն՝ նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքներիամբողջությունը: Այն հիմք է յուրաքանչյուր քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության: Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն ունի իր յուրահատուկ դերակատարումը համաշխարհային քաղաքակրթության պատմության հոլովույթում: Սրանով է կանխորոշվում այդ անձի, քաղաքացու և պետության դերակատարումը համաշխարհային գործընթացներում: Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցությունն ու մտածողություն, պատասխանատու և սեփական տեսակետն ուդիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող անձ ու քաղաքացի:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն՝ նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ուիիշողությունը, դարերիհոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Բնականաբար նման առանձնահատուկ նշանակություն ունի սեփական պատմությունը նաև հայ ժողովրդի համար: Հայոց պատմության իմացության միջոցով է հիմնականում ձևավորվում հայի ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, նրա միջոցով է աճող սերունդը հաղորդակցվում իր ժողովրդի անցյալին, պատմամշակութային ժառանգությանը: Միաժամանակ, սեփական պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային նպատակները, պահպանելու և ապահովելու հայի, որպես տեսակի, շարունակականությունը: Հայոց պատմությունը բովանդակում է նաև դաստիարակչական վիթխարի ներուժ՝ աճող սերնդի համար հանդիսանալով հայրենասիրության, անձնուրաց պայքարի և ազգային արժանապատվության ապացույցների անսպառ աղբյուր: Հայաստանը հին ժամանակներից սկսած եղել է եվրոպական և արևելյան քաղաքակրթությունների շփման, փոխհաղորդակցության և փոխազդեցության կենտրոնում: Շփվելով տարբեր մշակույթների հետ, կրելով նրանց որոշակի ազդեցությունը, հայ ժողովուրդը, սակայն, պահպանել ու զարգացրել է ինքնատիպ քաղաքակրթություն, որի շնորհիվ հասել է մարդկության պատմության նորագույն փուլին և շարունակում է իր պատմական ընթացքը:

Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացիներին ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայկական քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել ազատության ու բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Զինվելով պատմաքաղաքական փորձով և լավատեսությամբ՝ այսօրվա սովորողները շարունակելու են կերտել ու զարգացնել հայրենիքի հարատևման և ծաղկման ամուր հիմքերը, որով էլ պայմանավորված է մեր կողմից ընտրված թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

Հետազոտության նպատակը. ներկայացնել «Զեյթունը 19–րդդարի 60–ականթվականներին» թեմայի դասվանդման մեթոդներն ու դրա կարևորությունը 11–րդ դասարանում: Աշխատանքի նպատակից ելնելով, առաջ են քաշվել հետևյալ ***խնդիրներ:***

- Ուսումնասիրել և ներկայացնել ընդհանուր տեղեկություններ Զեյթունի 1862-1896 թվականների ապստամբության վերաբերյալ:
- Ներկայացնել Զեյթունի ապստամբության դասավանդման առանձնահատկությունները 11-րդդասարանում:

Հետազոտության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկուգլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից:

Գլուխ 1

Ընդհանուր տեղեկություններ Զեյթունի 1862-1896 թվականներիապստամբության վերաբերյալ

19-րդ դարի երկրորդ կեսի ազատագրական պայքարի ցայտուն օրինակներից է Զեյթունի ինքնապաշտպանությունը: Զեյթուն քաղաքը (և համանուն գավառը) գտնվում է Թուրքիայի տարածքում, լեռնային Կիլիկիայում: Տեղանքը դժվարանցանելի է, շրջապատված լեռներով: Վաղ ժամանակներից այստեղ հայ ազգաբնակչություն էր կենտրոնացել: Հայությունը, ապավինած իր արիությանն ու անմատչելի լեռներին, կարողացել էր դարեր շարունակ հետ մղել նվաճողներին և պահպանել էր իր կիսանկախ դրությունը: Զեյթուն գավառը և քաղաքը փաստորեն կառավարում էին հայկական ավանդական իշխանական տները, որոնք թեթև հարկ էին վճարում սուլթանական իշխանությանը: Զեյթունում և գավառում 19-րդ դարի 2-րդ կեսին բնակվում էին 35-40 հազար հայեր և շուրջ 8,5 հազար մահմեդականներ: Իր կիսանկախ վիճակով և ազգասիրական վարակիչ օրինակով Զեյթունը դարձել էր օսմանյան իշխանությունների աչքի փուշը: Վերջիններս բազմիցս փորձել էին հնազանդեցնել նրան, սակայն միշտ էլ պարտություն էին կրել: Անհաջողության մատնվեցին նաև օսմանյան կառավարության փորձերը՝ Զեյթունը դարձնել կառավարչի նստավայր և բնակիչներին պարտադրել կանոնավորապես հարկեր վճարել: 1860թ. հուլիսին կառավարությունը որոշեց փոխել իրավիճակը և վերջնականապես հնազանդեցնել զեյթունցիներին:

1862թ. Մարաշի կուսակալ Ազիզ փաշան կանոնավոր զորքով ծրագրեց հարձակվել Զեյթունի վրա: Թուրքական բանակի թիվը հասնում էր մոտ 40 հազար մարդու: Սրանց դեմ դուրս եկավ զեյթունցիների 7 հազարանոց զորախումբը, որը զինված էր ընդամենը պապենական հնաոճ հրացաններով, մահակներով ու քարերով: Իր բազմապատիկ թվական գերազանցության և սպառազինության շնորհիվ փաշան հուլիսի 27-ին գրավեց մի քանի հայկական գյուղեր, որից հետո զեյթունցիների ջոկատները շրջակա գյուղերի բնակչության հետ ամրացան

քաղաքում: Օգոստոսի 2-ին թուրքական ուժերը տարբեր կողմերից արդեն շրջապատել էին Զեյթունը: Լեռնականներն իրենց ամբողջ ռազմական ուժը բաժանեցին չորս հիմնական մասերի և խելամիտ ու հանդուգն գործողություններով դժվարին ճակատամարտերում կարողացան հակահարված տալ թշնամուն: Թուրքերը ծանր կորուստներ տալով, զեյթունցիներին թողնելով բավական քանակությամբ ռազմավար, դուրս քշվեցին Զեյթունի սահմաններից: Թուրքական բանակի դեմ մղվող մարտերում իրենց ռազմական տաղանդն ու քաջությունը ցուցադրեցին զեյթունցի իշխաններ Մ. Յաղուպյանը, Ն. Սուրենյանը և ուրիշներ: Իրենց սխրանքներով աչքի ընկան վարդապետ Մահտեսի Գրիգորը, Մարկոս Թաշճյանը և առհասարակ մարտնչող ողջ հայ բնակչությունը:

Այս պարտությունից հետո, չհրաժարվելով Զեյթունը գրավելու իր մտադրությունից, կառավարությունը Աշիր փաշային նշանակեց զորահրամանատար: Նախատեսվում էր նոր, 150-հազարանոց բանակով հարձակվել Զեյթունի վրա, հիմնահատակ անել այն և սրի քաշել հայ բնակչությանը: Սակայն զեյթունցիները կարողացան խուսափել արհավիրքից՝ դիմելով Կ.Պոլսի պատրիարքի և ֆրանսիական կառավարության օգնությանը: Վերջինս ձգտում էր ուժեղացնել իր ազդեցությունը Օսմանյան Թուրքիայում, ուստի խոստացավ օգնել նրանց՝ ճնշում գործադրելով թուրքական կառավարության վրա: Փոխարենը Ֆրանսիան ակնկալում էր կաթոլիկական դավանանքի ընդունումը զեյթունցիների կողմից: Իսկ օսմանյան կառավարությունը, զգուշանալով Կիլիկիայում Ֆրանսիայի ազդեցության ուժեղացումից, տեղի տվեց: Զեյթունի պաշարումը վերացվեց, լեռնականներն իրենց հերթին զիջումներ արեցին կառավարությանը: Նրանք այդուհետև պետք է ենթարկվեին օսմանյան վարչական կառավարմանը, կանոնավորապես վճարեին հարկերը՝ փոխարենը օգտվելով իրենց ազգային-եկեղեցական գործերը ինքնուրույն վարելու իրավունքից:

Այսպես ավարտվեց 1862թ. Զեյթունի հերոսական պայքարը, որը խոր հետք թողեց ազգային ինքնագիտակցության և ազատագրական պայքարի հետագա ընթացքի վրա: Հայությունը բնաշխարհում և. գաղթավայրերում նյութական միջոցներ էր հանգանակում և ուղարկում Կիլիկիա՝ աջակցելով նրա քաջակորով բնակչությանը: Զեյթունի իրադարձությունների ազդեցությամբ Վանում, Էրզրումում,

Մուշում և Կ.Պոլսում տեղի ունեցան հուզումներ և հանրահավաքներ: Զեյթունցիների պայքարը նպաստեց հայ հասարակական մտքի վերելքին, գրականությունն ու հրապարակախոսությունը համակեց ազատագրական տրամադրություններով:

Զեյթունի իրադարձությունները գնալով ավելի մեծ հնչեղություն էին ստանում՝ անհետաձգելի դարձնելով հարցի կարգավորումը: Վախենալով հայոց համազգային ապստամբության առաջացման վտանգից և աշխատելով կանխել միջազգային ազդու միջամտությունը՝ սուլթանական կառավարությունը ստիպված համաձայնվեց, որ մեծ տերությունները միջնորդի դեր ստանձնեն Զեյթունի ապստամբների և կառավարության միջև վարվող բանակցություններում:

Դեկտեմբերի 25-ին զեյթունցիներին հանձնվեց մեծտերությունների՝ Հալեպում հավատարմագրված հյուպատոսների հեռագիրը:Ուշագրավ է, որ այդ գիրը ուրախությամբ ընդունվեց թուրքական բանակի կողմից: Այն ոգևորությամբ ընդունեցին նաև զեյթունցիները՝ հյուպատոսների միջամտության փաստը մեկնաբանելով որպես կառավարության դեմ տարած հաղթանակ: Այսպիսով, զենքի ուժով լեռնականների ապստամբությունը խեղդելու և Զեյթունը գրավելու փորձերը ձախողվեցին, թուրքական կողմն, ի վերջո, ստիպված ինքն էր հաշտություն խնդրում:

1896 թ. հունվարի 22-30ը եվրոպական տերությունների հյուպատոսների միջնորդությամբ թուրքական բանակատեղում տեղի ունեցան հաշտության բանակցություններ:Թուրքական կողմը պահանջեց վերադարձնել խլված զենքերը, վերականգնել զորանոցն ու ամրությունները և ռազմական ատյանին հանձնել ապստամբության կազմակերպիչներին: Այս ամենի դիմաց զեյթունցիներին ներում էին խոստանում: Թուրքական պայմանները զեյթունցիները վճռականորեն մերժեցին՝ հայտարարելով, որ ներում ստանալու համար չեն ապստամբել և որ իրենց համար գերադասելի է մեռնել կռվելով, զենքը ձեռքներին:Որպես հաղթողներ, նրանք առաջադրեցին իրենց պայմանները: Սուլթանն, ի վերջո, ստիպված էր տեղի տալ՝ հիմնականում ընդունելով զեյթունցիների պայմանները: 1896 թ. հունվարի 30-ին Բ.Դռան և Զեյթունի ապստամբների միջև, մեծ տերությունների միջնորդությամբ, ստորագրվում է հինգ կետից բաղկացած հետևյալ համաձայնագիրը.

1. Զեյթունցիները և գավառի մահմեդականները հանձնում են պատերազմական զենքերը, սակայն պահելով որսորդական զենքերը և հին տիպի հրացաններն ու ատրճանակները:

2. Հայտ

արարվում էր համընդհանուր ներում, իսկ հնչակյան գործիչները պետության ծախսերով պետք է հեռանային կայսրության տարածքից:

3. Բավարարվում էր «միրի» հարկի կրճատման և նախկին տուրքերը չեղյալ հայտարարելու մասին զեյթունցիների առաջարկը: Զորանոցը վերա-կանգնվում էր պետության միջոցներով:

4. Զեյթունում նշանակվելու էր քրիստոնյա կառավարիչ (գայմագամ):

5. Չէր ընդունվում Զեյթունում թուրքական կայազորի վերացման առաջարկը: Դրանով հանդերձ, թուրքական բանակը զենքերը ստանալուց հետո պետք է հեռանար Զեյթունից՝ այնտեղ թողնելով միայն մեկ զորամաս1:

1896 թ. փետրվարի 3-ին ստորագրված հատուկ փաստաթղթով է դեմ փաշան և հյուպատոսներ հանդես էին գալիս որպես Զեյթունում հավաքված գաղթա-կանության անվտանգության երաշխավորներ՝ իրենց վրա վերցնելով նրանց տեղավորման խնդիրը:Վերր նշված պայմանների գործադրման հսկողությունը դրվում էր մեծ տերությունների հյուպատոսների վրա:Հետագա ամիսների ընթացքում տերությունների ճնշման ներքո թուրքական իշխանությունները դժկամությամբ, բայց, այնուհանդերձ, կատարեցին համաձայնագրի հիմնական պայմանները:Զեյթունում կառավարիչ նշանակվեց ազգությամբ հույն Յուվանակին:

Համաձայնագրի ստորագրումը զեյթունցիների փայլուն հաղթանակն էր:Օսմանյան կայսրությունը ստիպված էր սեփական հպատակների հետ ստորագրել մի համաձայնագիր, որով փաստացի ճանաչում էր նրանց որոշակի իրավունքները:Զեյթունցիների հաղթանակը հայ զինյալ ազատամարտի կենսունակության վկայությունն էր, թեև Զեյթունի իրադարձությունները նաև պարզ

1Ժամկոչյան Տ., Պարսամյան, Հայժողովրդիպատմություն, 2009, էջ 289-300:

որոշ ցույց տվեցին նույն ազատամարտի թույլ կողմերը:Ապստամբության ողջ ընթացքում Զեյթունը գործնականում մնաց միայնակ՝ չստանալով հայաբնակ այլ վայրերի աջակցությունը և անգամ ռազմական, նյութական ու դրամական այն օժանդակությունը, որն ակնկալվում էր և որը նրան խոստացել էին:

Զեյթունի հերոսական ապստամբությունն ամբողջ մերկությամբ ցուցադրում էր այն վնասը, որ ազատագրական շարժմանը հասցնում էին թուրքական բռնապետության դեմ պայքարում ներգրավված կուսակցությունների անմիաբան գործողությունները՝ միասնական ղեկավար կենտրոնի բացակայության պատճառով:

Հատկապես ակնհայտ դարձավ ազատագրական պայքարը ղեկավարելու հնչակյան կենտրոնի անկարողությունը, որի մասին կասկածի առաջին լուրջ նշաններն առաջացել էին դեռևս Սասունի ապստամբության օրերին:Երկրում աշխատող հնչակյան գործիչների և հնչակյան կենտրոնի միջև առաջացած հակամարտության հետևանքով 1896 թ, Լոնդոնում կայացած համագումարում հնչակյան կուսակցությունը պառակտվեց, գնալով թուլացավ և կորցրեց իր ղեկավար դերը հայոց ազատամարտում: Սակայն ազատագրական պայքարը շարունակվում էր: Հերոսական մաքառումի հերթական ասպարեզ դարձան Վանն ու Վասպուրականը2:

Այսպիսով, Հայոց ազատագրական պայքարի արծվաբույն Զեյթունն իր Հերոսական մաքառման շնորհիվ կարողացել էր պահել ներքինին իքնուրույնությունը, որի հետ համակերպվել չէր կարողանում սուլթանական կառավարությունը:

Զեյթունի իրադարձությունները գնալով ավելի մեծ հնչեղություն էին ստանում՝ Բ. Դռան համար անհետաձգելի դարձնելով հարցի կարգավորումը:Վախենալով հայոց համազգային ապստամբության առաջացման վտանգից և աշխատելով կանխել միջազգային ազդու միջամտությունը՝ սուլթանական կառավարությունը ստիպված համաձայնվեց, որ մեծտերությունները միջնորդի դեր ստանձնեն Զեյթունի ապստամբների և կառավարության միջև վարվող բանակցություններում3:

2Հրանտ Աբրահամյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 2004, էջ 247-251:
3ՀրաչիկՍիմոնյան,«Հայոց պատմություն», Երևան 2012, էջ 119:

1896 թ. Փետրվարի 3-ին ստորագրված հատուկ փաստաթղթով էդհեմ փաշան և հյուպատոսներ հանդես էին գալիս որպես Զեյթունում հավաքված գաղթականության անվտանգության երաշխավորներ՝իրենց վրա վերցնելով նրանց տեղավորման խնդիրը:

Այսպիսով, ինքնապաշտպանության ղեկավարները Թերլեմեզյանների ընդարձակ պարտեզում կազմակերպում են միջկուսակցական բազմահազարանոց հավաք և ներկաներին հայտնում, որ հանուն խաղաղության ու բնակչության անվտանգության իրենք կամովին հեռանում են երկրից:

1894-1896թթ. իրադարձությունները հայ ազատագրական պայքարի բարձրակետն էին: Թեև դրանք միջազգային սպասված արձագանքը չունեցան, բայց ակնհայտ դարձավ, որ Օսմանյան կայսրությունում հայերի ազատագրական շարժումը դարձել է ռազմա-քաղաքական լուրջ գործոն, որը հնարավոր չէ անտեսել:Աբդուլ Համիդը հարկադրված էր բանակցություններ սկսել հայ ազգային կուսակցությունների հետ:

ԳԼՈՒԽ 2

Զեյթունի ապստամբության դասավանդման առանձնահատկությունները 11-րդ դասարանում

Արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում, ընտանիքից բացի, դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում է ապագա քաղաքացու բնավորությունը, ձևավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Ուսուցչի մարդկային և բարոյական կերպարը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: «Ուսուցչի գաղափարապես աղքատ, կենսականորեն անբովանդակ, դժգույն կերպարը ծնում է անտարբերություն, ձանձրույթ, բարոյական չկողմնորոշվածություն, անհեռանկար երեխայի ձևավորում, որից էլ դեպի կործանարար վարքագիծ, վատ ավանդույթի սաղմնավորում ընդամենը մեկ քայլ է»4: Սովորողների արժեքային կողմնորոշման խնդրի լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային հարաբերությունների միջոցով աշակերտների մեջ ձևավորում է ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի հետաքրքրություն5:

Պատմության որակյալ դասի գլխավոր հատկանիշը և, ընդհանրապես, Զեյթունի ապստամբության պատմության դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը գրական և մանկավարժական գիտությունների ժամանակակից նվաճումներին, առաջավոր փորձին,ուսումնադաստիրակչական գործընթացի օրինաչափություններին: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պատմության դպրոցական դասընթացը չի ընդգրկում պատաբանական բոլոր նվաճումները:

Զեյթունի ապստամբության դասավանդման նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սովորողների մարդկության պատմական ուղու, նրա

4 Кон И. С., Психология старшекласника, М., “Просвещение”1980, էջ 132:

5Կիրակոսյան Գ.Հ., Դասավանդման մեթոդիկա, Եր. 2015, էջ 56:

սոցիալական, հոգևոր և բարոյական փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելուն, կոնկրետ ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն: Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիաների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնաղումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում6:

Զեյթունի ապստամբության առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով7:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ.

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակնորի հայոց պատմության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելով պետա է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

6Դոլուխանյան Ա., Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 63-66:

7Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 դդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, Եր. 2009, էջ 59-60:

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

6. Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

7. Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

8. Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

10. Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական

մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

11. Նպաստել մարդասիրություն և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

13. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

14. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները.

- խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները.

- սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվոլու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ:

- ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ:

- զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ:

- զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր ր հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն,

տեսողություն, կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում, համադրում ր այլն)8:

Զեյթունի ապստամբության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիրակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը,գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքներիմ հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն: Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ9: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության -հանրագումարային դասերըմ կինո-դասերը, էքսկուրսիոն դասը, սովորողների ռեֆերատների պաշտպանության դասը, սեմինարների դասը, ստուգարքի դասը: Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը, մեր համոզմամբ, խառը /համակցված/ դասն է, որին ստորև կանրադառնանք փոքր-ինչ հանգամանորեն: Դասի այս տիպն այսպես է կոչվում այն պատճառով,որն ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում և յուրացում, ամրապնդում, ընդհանրացում, ստուգում և գնահատում: Դասի այս տիպը ամենատարածվածն է, մանավանդ ցածր դասարաններում, որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է, նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով, կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն

8Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ: էջ 14
9Սարգսյան Ա. , Մալոյան Ա. , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում, Եր. 2009, էջ 47-51:

հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դասի այս տիպը կիրառվում է ոչ մեծ ուսումնական թեմաներ ուսումնասիրելիս:

Զեյթունի ապստամբության պատմությունը՝ նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Բնականաբար նման առանձնահատուկ նշանակություն ունի սեփական պատմությունը նաև հայ ժողովրդի համար: Զեյթունի ապստամբության իմացության միջոցով է հիմնականում ձևավորվում ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, ավելի շատ նրա միջոցով է աճող սերունդը հաղորդակցվում իր ժողովրդի անցյալին, պատմամշակութային ժառանգությանը: Միաժամանակ, Զեյթունի ապստամբության պատմության իմացությունը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային նպատակները, պահպանելու և ապահովելու հայի, որպես տեսակի, շարունակականությունը: Զեյթունի ապստամբության պատմությունը բովանդակում է նաև դաստիարակչական վիթխարի ներուժ՝ աճող սերնդի համար հանդիսանալով հայրենասիրության, անձնուրաց պայքարի և ազգային արժանապատվության ապացույցների անսպառ աղբյուր: Վերջապես, Զեյթունի ապստամբության իմացությունը և նրա միջոցով սեփական պատմամշակութային ժառանգության յուրացումը աճող սերդին հնարավորություն կտա ակտիվ և գործունյա մասնակցություն ունենալ Հայաստանի ապագայի կերտմանը:

Զեյթունի ապստամբության դասավանդման գլխավոր նպատակն է

.Պատմական գիտելիքներով զինված, ազգային ինքնագիտակցությամբ օժտված, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, ազգային նկարագիր ունեցող հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է: Առարկայի դասավանդման գլխավոր խնդիրներն են

.Սովորողին հաղորդակից դարձնել նախորդ սերունդների ստեղծած հոգևոր մշակութային արժեքներին:

.Ցույց տալ Հայաստանի և հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության տեղը և դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ:

.Ծանոթանալ և իմանալ սեփական ակունքները, ժողովրդի պատմական ընթացքը ժամանակի հոլովույթում:

.Օգնել հասկանալու պատմական իրադարձությունները, վերլուծել երևույթները:

.Ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ, ինչը կնպաստի պատմական ժառանգականության ընկալմանը և պատմական փորձի յուրացմանը ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցմանը:

Զեյթունի ապստամբության դասավանդման մեթոդներն են.

- Ուսումնական գործընթացի բացակողմանիություն
- Ուսումնական գործընթացի միօրինակության բացառում
- Մտագրոհ
- Բանավեճ և բազմաբովանդակ քննարկումներ
- Թվային միջոցների օգտագործում (եթե նպաստում են դասի էֆեկտիվությանը)
- Դասի ընթացքում ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով կարճաժամկետ (առավելագույնը 5-րոպե) թեմային առնչվող այլ թեմաների քննարկում
- Դասի ընթացքում անմիջականության և ազատ մթնոլորտի պահպանում

Զեյթունի ապստամբության ուսումնական միջավայրն են.

- Ֆիզիկական միջավայր (Դասասենյակ, լաբորատորիա, կրթական բակ, զբոսայգի, ուսումնական ճամփորդություններ, թանգարաններ, հնավայրեն և այլն)
- Ոչ ֆիզիկանան միջավայր (Կայքեր, բլոգեր, սոցցանցեր, teams-հարթակ, zoom-հարթակ և այլն)

Նախագծային և հետազոտական աշխատանքներին ներկայացվող պահանջներ՝

-Օգտագործված գրականության և համացանցի ռեսուրսների ցանկ

-Ստեղծականություն

-Վերլուծական միտք

-Համեմատություն

-Ինֆորմացիայի համակողմանի տիրապետում և վերլուծում

-Սեփական տեսակետի արտահայտում

-Սեփական խոսքի մշակում:

Եզրակացություններ

Այսպիսով, ելնելով վերոնշյալից, հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ պատմություն առարկան: Դպրոցում սովորողները Հայոց պատմության, մասնավորաապես Զեյթունի ապստամբության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Զեյթունի ապստամբության առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեաքյին համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Օգտագործված ցանկ

1. ԱբրահամյանՀ, Հայժողովրդիպատմություն, Երևան, 2004, 452 էջ:
2. Դոլուխանյան Ա., Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006, 159 էջ:
3. ԺամկոչյանՏ., Պարսամյան, Հայժողովրդիպատմություն, 2009, 541 էջ:
4. Կիրակոսյան Գ.Հ., Դասավանդման մեթոդիկա, Եր. 2015, 89 էջ:
5. ՂուկասյանԱ,Հայոցպատմությունը 8-9 դդդասարաններում:Ուսուցչիձեռնարկ, Եր. 2009, 122 էջ:
6. ՍարգսյանԱ. , ՄալոյանԱ. , Հայոցպատմություն 10-11 դդդասարաններում, Եր. 2009, 147 էջ:
7. Սիմոնյան Հ. ,«Հայոց պատմություն», Երևան 2012, 623 էջ:
8. КонИ. С., Психологиястаршекласника, М., “Просвещение”,1980, 347 с.